ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 4

«01.03. 2018թ». N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «28» 03 2018թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Մայ Քլաբ» ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Դ.Սարգսյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր և հիմք ընդունելով **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության** և **«Մայ Քլաբ»** ՍՊԸ-ի միջև **01.03.2018թ.** կնքված թիվ **ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18** ծածկագրով պետական գնման պայմանագրի 4.2 և 7.13 կետերով փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայության գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված 1-ի և 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայության (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 01.**03.2018թ.** կնքված թիվ **ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18** Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 6 էջից, կնքված են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Մայ Քլաբ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3
Հ/Հ՝ 900013010013,	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ՝1570004723220100 ,
գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 02593047
ՀՎՀՀ՝ 02505983	
Ա.Կարապետյան	Դ.Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20 18 թ. կնքված
ծածկագրով համաձայնագրի
20 18 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«29» 03
Համաձայնագիր 4
«01» 03

ՀՀ ՏԶՆՆ ԳՀԾՁԲ- 18/8-23-18

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից/համակարգչային ծառայությունների մատուցում 98111120	ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, շենքում տեղեկատվական հանգույցների, ծրագրային շահագործման և տեղադրման ապահովման, այդ թվում՝ տեղադրված 13 սերվերների և առավելագույնը 210 աշխատանքային համակարգիչների համար՝ 1. Լիցենզավորված հակավիրուսային սերվերի շուրջօրյա սպասարկում առավելագույնը 210 համակարգիչների համար: 2. DHCP և DNS սերվերների, ինչպես նաև AD սերվերի 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում և սպասարկում: 3. Brandmauer և Proxy ծրագրային սերվերների 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում և սպասարկում: 4. Տեղեկատվական կենտրոնի սերվերների աշխատանքային կայանների հակավիրուսային պաշտպանության անխափան աշխատանքի ապահովում: 5. Թիրախային սերվերային խմբի համար առանձնացված (DMZ) միջավայրի ստեղծում և շուրջօրյա	դրամ	20538000	1	Մկրտչյան 5	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը

		սպասարկում: 6. Էլեկտրոնային նամակագրության (eMail) սերվերի ամենօրյա սպասարկում, տվյալների արխիվացում, 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում: 7. Տեսախցիկների 2 IP-տեսաձայնագրման և 85 տպիչ սարքերի ծրագրային սպասարկում: 8. Mulberry համակարգի 2 սերվերների սպասարկում (առանձին ներքին կապուղիով միացում համակարգին և անխափան 24 ժամյա կապի ապահովում ներքին և արտաքին օգտվողների համար մշտական հասանելիություն միջանցիկ սարքավորումներով՝ փոխարկիչներով, միկրոտիկով): 9. Mulberry համակարգի խորն իմացությամբ ամենօրյա խորհրդատվություն առավելագույնը 210 օգտագործողների համար: 10. Առավելագույնը 210 համակարգիչների մշտական դիագնոստիկա: 11. Ընդհանուր համակարգի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում: 12. Օպերացիոն համակարգերի կարգավորում ըստ պահանջի կամ անհրաժեշտության: 13. Աշխատանքային ծրագրերի (Word, Outlook , Excel, Power Point. Photoshop, Corel Draw, Fine Reader, 1C, ՀԾ և այլն) խորը գիտելիքների իմացությամբ ամենօրյա խորհրդատվություն ըստ պահանջի կամ անհրաժեշտության: 14. Գործող ներքին համակարգչային ցանցի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում, ծրագրային ընդլայնում ըստ պահանջի: 15. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում գտնվող բոլոր					

		սերվերների և համակարգիչների ծրագրային ապահովան վերատեղադրում, վերահսկում (proxy server, mail server, active directory, ftp և այլ սերվիսների սպասարկում, ըստ ժամանակացույցի արխիվացում), ինչպես նաև, ցանցում առկա բոլոր սարքերի ծրագրային անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում: 16. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տեղեկատվական կենտրոնի (Data Center) և ներքին կորպորատիվ ցանցի (Intranet) սպասարկում: Տեղեկատվական կենտրոնի ներքին և արտաքին՝ օգտագործվող VPN ցանցի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովումը, ինչպես նաև կարգավորվող սվիչների, տվյալների և օգտվողների փոփոխություն: 17. Ցանցային ադմինիստրատորի, սիստեմային ադմինիստրատորի, ՎԵԲ ադմինիստրատորի, համակարգչային ծրագրերի խորհրդատուի (HelpDesk), Mulberry համակարգի մասնագետ-խորհրդատուի, տեխնիկական սպասարկման ծառայությունների փորձառու մասնագետների մրցույթին մասնակցող կազմակերպության աշխատակազմում առկայություն: Համապատասխան մասնագետների ամենօրյա (9:00-18:00) առկայությունը ըստ պահանջի վերոհիշյալ կազմակերպությունում անհրաժեշտ է, այդ թվում արտաժամային: Ինչպես նաև մասնագետի աջակցություն նախարարության ներկայացումը ցանկանած ներքին և արտագնա միջոցառումներում և աշխատանքներում: 18. Նշված մասնագետները պետք է ունենան VMware, Mulberry, MS SQL					

		Server համապատասխան որակավորման փաստաթղթեր, սպասարկող անձնակազմը պետք է ունենա պետական մարմինների առնվազն 1 տարվա սպասարկման աշխատանքային փորձ:					

* *մարտակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

_____ **Ա.Կարապետյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մայ Քլաբ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝1570004723220100 ,
ՀՎՀՀ՝ 02593047

_____ **Դ.Սարգսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«28» 03 20 18 թ. կնքված
Համաձայնագիր 4 ծածկագրով համաձայնագրի
«06» 03 20 18 թ. կնքված

ՀՀ ՏԶՆՆ ԳՀԾՁԲ- 18/8-23-18

ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տնտ դաս.	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111120	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից/համակարգչային ծառայությունների մատուցում	4241	-	-	-	6 846000	6 846000	6 846000	13 692000	13 692000	13 692000	20 538000	20 538000	20 538000	20538000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մայ Քլաբ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝1570004723220100 ,
ՀՎՀՀ՝ 02593047

Դ.Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ /ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18

ք. Երևան «01» 03 2018 թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Մայ Քլաբ» ՍՊՆ**-ն, ի դեմս տնօրեն **Դ.Սարգսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մասնագիտացված կազմակերպությունների կողմից /համակարգչային ծառայությունների/ մատուցման** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **20538000** (քսան միլիոն հինգ հարյուր երեսուն ութ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով **(որը կսահմանվի սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվող համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում)** (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Մայ Քլաբ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3
Հ/ՀՀ՝ 900013010013,	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ՝1570004723220100 ,
գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 02593047
ՀՎՀՀ՝ 02505983	
Ա.Կարապետյան	Դ.Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«01» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից/համակարգչային ծառայությունների մատուցում 98111120	ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, շենքում տեղեկատվական հանգույցների, ծրագրային շահագործման և տեղադրման ապահովման, այդ թվում՝ տեղադրված 13 սերվերների և առավելագույնը 210 աշխատանքային համակարգիչների համար՝ 1. Լիցենզավորված հակավիրուսային սերվերի շուրջօրյա սպասարկում առավելագույնը 210 համակարգիչների համար: 2. DHCP և DNS սերվերների, ինչպես նաև AD սերվերի 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում և սպասարկում: 3. Brandmauer և Proxy ծրագրային սերվերների 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում և սպասարկում: 4. Տեղեկատվական կենտրոնի սերվերների աշխատանքային կայանների հակավիրուսային պաշտպանության անխափան աշխատանքի ապահովում: 5. Թիրախային սերվերային խմբի համար առանձնացված (DMZ) միջավայրի ստեղծում և շուրջօրյա սպասարկում: 6. Էլեկտրոնային նամակագրության (eMail) սերվերի ամենօրյա սպասարկում, տվյալների արխիվացում, 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում: 7. Տեսախցիկների 2 IP-տեսաձայնագրման և 85 տպիչ սարքերի ծրագրային սպասարկում: 8. Mulberry համակարգի 2 սերվերների սպասարկում (առանձին ներքին կապուղիով միացում համակարգին և անխափան 24 ժամյա կապի ապահովում ներքին և արտաքին օգտվողների համար մշտական հասանելիություն միջանցիկ սարքավորումներով՝ փոխարկիչներով, միկրոտիկով): 9. Mulberry համակարգի խորն իմացությամբ ամենօրյա խորհրդատվություն առավելագույնը 210 օգտագործողների համար:	դրամ	20538000	1	Մկրտչյան 5	

		10. Առավելագույնը 210 համակարգիչների մշտական դիագնոստիկա: 11. Ընդհանուր համակարգի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում: 12. Օպերացիոն համակարգերի կարգավորում ըստ պահանջի կամ անհրաժեշտության: 13. Աշխատանքային ծրագրերի (Word, Outlook , Excel, Power Point. Photoshop, Corel Draw, Fine Reader, 1C, ՀԾ և այլն) խորը գիտելիքների իմացությամբ ամենօրյա խորհրդատվություն ըստ պահանջի կամ անհրաժեշտության: 14. Գործող ներքին համակարգչային ցանցի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում, ծրագրային ընդլայնում ըստ պահանջի: 15. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում գտնվող բոլոր սերվերների և համակարգիչների ծրագրային ապահովան վերատեղադրում, վերահսկում (proxy server, mail server, active directory, ftp և այլ սերվիսների սպասարկում, ըստ ժամանակացույցի արխիվացում), ինչպես նաև, ցանցում առկա բոլոր սարքերի ծրագրային անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում: 16. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տեղեկատվական կենտրոնի (Data Center) և ներքին կորպորատիվ ցանցի (Intranet) սպասարկում: Տեղեկատվական կենտրոնի ներքին և արտաքին՝ օգտագործվող VPN ցանցի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովումը, ինչպես նաև կարգավորվող սվիչների, տվյալների և օգտվողների փոփոխություն: 17. Ցանցային ադմինիստրատորի, սիստեմային ադմինիստրատորի, ՎԵԲ ադմինիստրատորի, համակարգչային ծրագրերի խորհրդատուի (HelpDesk), Mulberry համակարգի մասնագետ-խորհրդատուի, տեխնիկական սպասարկման ծառայությունների փորձառու մասնագետների մրցույթին մասնակցող կազմակերպության աշխատակազմում առկայություն: Համապատասխան մասնագետների ամենօրյա (9:00-18:00) առկայությունը ըստ պահանջի վերոհիշյալ կազմակերպությունում անհրաժեշտ է, այդ թվում արտաժամային: Ինչպես նաև մասնագետի աջակցություն նախարարության ներկայացումը ցանկանած ներքին և արտագնա միջոցառումներում և աշխատանքներում:					

		18. Նշված մասնագետները պետք է ունենան VMware, Mulberry, MS SQL Server համապատասխան որակավորման փաստաթղթեր, սպասարկող անձնակազմը պետք է ունենա պետական մարմինների առնվազն 1 տարվա սպասարկման աշխատանքային փորձ:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*****Ծառայությունների մատուցումը կիրականացվի Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված գնման ժամանակացույցով: Սույն ընթացակարգի ֆինանսավորման աղբյուրն ՝ արտաբյուջե է:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մայ Քլաբ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝1570004723220100 ,
ՀՎՀՀ՝ 02593047

Դ.Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«01» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:* ***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/ՀՀ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

_____ Ա.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մայ Քլաբ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝1570004723220100 ,
ՀՎՀՀ՝ 02593047

_____ Դ.Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 01 » 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 01 » 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԾՁԲ-18/8-23-18 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____
-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն